ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ
ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի
արտասահմանյան գրականության ամբիոնի մագիստրոս
ՀՏԴ 821.19.0

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ «ՏՐՏՈՒՆՋՔ» ԵՎ «ՋՂՋՈՒՄ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. Պ. Դուրյան, «Տրտունջք», «Ջղջում», հակադրություն, Աստված, բանաստեղծ, արև, աստղ, վերև, ներքև, ռոմանտիզմ:

Ключевые слова: П.Дурян, «Ропот», «Раскаяние» ,противопоставление , Бог , поэт, солнце, звезда , верх, низ , романтизм.

Key words: P. Durian, «Clamour», «Repentance», contraposition, God, poet, sun, star, up, down,romanticism.

Պետրոս Դուրյանի բանաստեղծությունները իրենց բնույթով հակված են ռոմանտիզմ գրական ուղղությանը և, հետևաբար, տոգորված են ռոմանտիզմի կարևորագույն սկզբունքներով: Ռոմանտիզմի սկզբունքներից ամենակարևորը հակադրությունն է, որը ցայտուն կերպով արտահայտված է Դուրյանի «Տրտունջք» և ‘Ջղջում’ բանաստեղծությունների մեջ[1]: Հակադրությունը երևում է այստեղ և՛ լեզվի, և՛ կոմպոզիցիայի և՛ գաղափարաբանության մեջ: Այս բանաստեղծությունները և՛ կրում են հակադրություն իրենց մեջ, և՛ հակադրված են հենց մեկը մյուսին: Սա Դուրյանի ստեղծագործության միակ բանաստեղծական զույգը չէ, որտեղ բանաստեղծությունները հակադրված են իրար. Հիշենք ամենաբնորոշը՝ «Սիրել»-ը և «Դրժել»-ը, ուր հակադրությունը երևում է հենց վերնագրերից և շատ վառ է արտահայտված,քանզի ակնհայտ է,որ միտումնավոր է արված հեղինակի կողմից:

Վերլուծենք Դուրյանի բանաստեղծությունները՝ մասնավորից գնալով ընդհանուրին, օգտագործելով դեդուկտիվ մեթոդը: Սկսենք «Տրտունջք» բանաստեղծությունից: «Տրտունջք»-ը կառուցված է հակադրության վրա, որը Դուրյանը ստեղծում է Աստծո և Բանաստեղծի, ինչպես նաև՝նրանց խորհրդանիշների միջոցով՝ Արևի ու Աստղի, երկու տարբեր բնույթ ունեցող կրակների և այլն:

Առաջին տողը.

[1] Հմմտ. Էդոյան Հենրիկ, Շարժում դեպի հավասարակշռություն, հոդվածներ, էսսեներ, «Սարգիս Խաչենց Փրինթինֆո» հրատ., Երևան, 2009, էջ 401:

Էհ, մնաք բարով, Աստված և արև[2]…

Սկսելով այս տողով, հեղինակը ցույց է տալիս, որ Արևը ի սկզբանե կապված է լինելու Աստծո հետ, նույնանալու է Նրան, այդպիսով՝ դառնալով խորհրդանիշ: «Կոմպոզիցիայի առաջին մասում գլխավոր գործող «անձը» Աստվածն է, որից բխում է և որի շուրջը կատարվում է ողջ դրաման: «Աստվածը» և «Արևը» գտնվում են իմաստային բարդ հարաբերությունների մեջ, որոնք ի հայտ են գալիս երկու մակարդակներում, առաջինում նրանք նույնացված են, երկրորդում՝ հակադրված: Հրաժեշտի խոսքը հղվում է երկուսին՝ «Աստծուն» և «Արևին», տիեզերական երկու ուժեր կամ «կերպարներ», որոնց հետ կապված է խոսող «ես»-ի ճակատագրական-կենսական հանգույցը, նրա աղաղակը, որը կարող է խախտել կամքի և գիտակցության համար անմատչելի աշխարհակարգը, որի անտարբեր «պտույտի» և անհասկանալի «դատավճռի», մարդկային որևէ տեսակետից չհիմնավորված «որոշման» մեջ կործանվում է կյանքը»[3]: Երկրորդ տողը.

Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև[4]…

Այս տողով արդեն հեղինակը շեշտում է, որ Աստվածն ու Արևը գտնվում են իրենից վերև, իսկ ինքը ներքևում է, ինչից ստեղծվում է հաջորդ հակադրությունը՝ Վերևի ու Ներքևի միջև .«Վերևի» և «ներքևի» հակադրությունը, որով բանաստեղծության մեջ մտնում է տարածությունը, որպես ծավալվող կոնֆլիկտի նյութական-իրային պատկեր կամ ինֆորմացիայի շոշափելի մակարդակ, անցնում է տեքստի ողջ տարածքով: Բանաստեղծի դիրքը «ներքևից» ուղղված է դեպի «վերև», այդ դիրքը կամ նրա տեսակետը կազմում են հյուսվածքի կենտրոնը, որտեղից դուրս են գալիս և որին հանգում են բոլոր հարաբերությունները»[5]:

Այնուհետև.

Աստղ մ՝ալ կ՝երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ինչ են որ, եթե ոչ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկնքին.[6]…

Այս տողերից պարզ է դառնում, որ հեղինակը իրեն նույնացնում է Աստղի հետ և այն ընտրում է որպես իր խորհրդանիշ: Ինչպես նաև՝ այն, որ

---

[2] Դուրյան Պետրոս, Երկեր, Սովետական գրող հրատ., Երևան, 1981, էջ 52:

[3]Էդոյան Հենրիկ, Շարժում դեպի հավասարակշռություն, հոդվածներ, էսսեներ, Սարգիս Խաչենց Փրինթինֆո հրատ.,Երևան, 2009, էջ 402-403:

[4] Դուրյան Պետրոս, Երկեր, Սովետական գրող հրատ., Երևան,1981, էջ 52:

[5]Էդոյան Հենրիկ, Շարժում դեպի հավասարակշռություն, հոդվածներ, էսսեներ, Սարգիս Խաչենց Փրինթինֆո հրատ.,Երևան, 2009, էջ 403:

[6] Դուրյան Պետրոս, Երկեր, Սովետական գրող հրատ., Երևան,1981, էջ 52:

այս տողերում աստղերը «թռնում են այրելու» երկնքի ճակատը ևս մեկ անգամ շեշտում է, որ աստղերը գտնվում են ներքևում: Բացի դրանից՝ Աստծո հետ արդեն նույնանում են նաև Կրակ և Լույս խորհրդանշող երևույթները.

Այլ այն Աստուծույն՝ *շանթերու՛ արմատ՝*
Հավելում զենքերն ու *զարդերն հրատ,*
Այլ, ո՛հ, ի՞նչ կ՝ըսեմ...*շանթահարե զ՝իս*[7]…

Հակադրությունը այստեղ այն է, որ Աստծո և Բանաստեղծի «կրակներ»-ը տարբեր են. Երկուսն էլ կրակ են, բայց ունեն այլ բնույթներ: Խոսելով այն մասին, որ Աստված խլել է նրանից իր «կրակ»-ը՝ բանաստեղծը դրան հակադրում է արդեն իր սեփական, ներքին կրակը.

Ո՛հ, կըդողդոջեմ, դժգույնեմ, դժգու՛յն
Փըրփըրի *ներսս դըժոխք մ՝հանգույն*[8]…

Հասկանալի է, որ այս՝ Դժոխքի կրակը տարբերվում է Աստծո Շանթերի կրակից (այս Կրակի մասին հիշատակում կա նաև Դուրյանի «Լճակ» բանաստեղծության մեջ. «Հոն հրդեհ կա, ոչ մատյան...»[9]): Ապա, Դուրյանը շարունակում է հաջորդ տողերում.

Ո՛հ, կայծ տըվե՛ք ինձ,կայծ տըվե՛ք,ապրի՛մ...
Ո՛հ, տըվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Երկնքի աստղե՛ր հոգվույս մեջ ընկե՛ք
Կայծ տըվեք՛, կյանք՝ ձեր սիրահարին հեք: [10]…

Զուգահեռաբար Դժոխքի կրակը ներքևում է, իսկ Շանթերի կրակը՝ վերևում, ինչը կրկին ցույց է տալիս Վերևի ու Ներքևի հակադրությունը. Աստված Վերևում է, ինքը՝ Ներքևում: Ուշադրություն դարձնենք այստեղ հետևյալ տողերին.

Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև...
Որք թըռին այրել ճակատն երկնքին...
Այլ, ո՛հ ինչ կ՝սեմ...շանթահարե զ՝իս[11]…

Շանթահարելն ինքնըստինքյան ենթադրում է, որ շանթահարողը գտնվում է վերևում: Բանաստեղծը ցանկանում է, ձգտում է «ելնել աստղերու սանդուղքն ահալի…» և այդպիսով հասել Աստծուն, ողջունել

[7] Նույն տեղում, էջ 52:
[8] Դուրյան Պետրոս, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1981, էջ 52:
[9] Նույնտեղում, էջ 49:
[10] Նույնտեղում, էջ 53:
[11] Նույնտեղում, էջ 53:

Նրան, չնայած ինքը «դողդոջունէակ» է: Եվ հետաքրքրական է, որ հետո՝ հաջորդ տողերում կարդում ենք.

Այժմեն թող որ շանթ մ՝ ըլլամ դակահար
Պլլրվիմ անվանդ մոնչեմ անդադար
Թող անեծք մ՝ ըլլամ քու կողըդ խըրիմ
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:[12]…

Այս տողերում արդեն ակնհայտ է՝ նա է շանթը, որ շանթահարում է Աստծուն. Բանաստեղծն է վերևում, Աստված՝ ներքևում: Նրանք հակադրված են իրար՝ նույն տեղում չեն. Երբ մեկը վերևում է, մյուսը ներքևում է և հակառակը: Հաջորդիվ՝ ուշադրություն դարձնենք վերջին բառակապակցությանը՝ «Աստված ոխերիմ». Սա հակադրություն է երկու բառերի միջև: Իհարկե խիստ բարդ է տալ բնորոշումը Աստված էակի, սահմանել նրան. Նրա բնորոշումը ամենից ավելի աղերսակից է Հովհաննես առաքյալի Ավետարանում բերված բնորառշմանը. «Աստված Սեր է»[13]: Աստված ամենաուղղակիորեն, ամենասերտ կերպով կապված է Սիրո հետ. Եթե ինչ որ բան սիրում ենք, աստվածացնում ենք այն, երբ կա Սեր, կա Աստված, իսկ եթե այլևս Սեր չկա, աստվածացում էլ այլևս չկա: Եթե Աստված սիրելի չէ, այլևս Աստված չէ: Երևույթը կամ էակը այլևս սովորական է, ոչ աստվածային: Այսպիսով՝ առկա է սուր հակադրություն այս բառակապակցության երկու բառերի միջև:

Սակայն, ինչպե՞ս է ստացվել, որ Բանաստեղծն ու Աստված «փոխվել են տեղերով», Բանաստեղծը ինչպե՞ս է բարձրացել վերև և սպառնում է շանթահարել Նրան, ունի արդեն իր սեփական Շանթն ու Կրակը: Սրա բացատրությունը թերևս այն է, որ Դուրյանը իրեն նույնացնում է Աստղիհետ, իսկ Աստծուն՝ Արևի, և այդ երկուսը հակադրում է իրար. Աստղը՝ որպես փոքրիկ Արև: Բարձրանալ աստղերի ահալի սանդուղքը նշանակում է դառնալ Բանաստեղծ, նմանվել Աստծուն: Ինչպես Արիստոտելը բնորոշել է արվեստը. «Էպոսը և տրագեդիան, ինչպես նաև՝ կոմեդիան, դիֆերամբիկ պոեզիան, ավլետիկայի և կիֆարիստիկայի մեծ մասը,դրանք բոլորը, ըստ էության, նմանակում են»[14]. Արվեստագետը նմանակում է Արարչին: Հետաքրքրական է, որ հին հունարենում «ο ποιητής»՝ պոետ բառի արմատն է «ποιέω» բառը, որ նշանակում է՝ «արարել», «կատարել», «անել», և, օրինակ, նույնարմատ և նույնահունչ «ποιητέος» բառը

[12] Նույնտեղում, էջ 53:

[13] Աստվածաշունչ Ավետարան ըստ Հովհաննեսի 4:8:

[14] Аристотель, Поэтика, государственное издание издательство художественной литературы, Москва , 1975, стр. 5.

նշանակում է՝ «այն, ինչ պիտի արվի, արարվի, կատարվի»[15]: Այս նույնարմատությունը կա նաև հայերենում. «Բանաստեղծ»՝ «ստեղծող», «ստեղծագործել»՝ «ստեղծել», «արարել», և այն, որ հայերենում «Արարիչ» բառը օգտագործվում է և ընկալվում որպես «Աստված», իսկ «բանաստեղծ»-ը՝ որպես «ստեղծագործող մարդ», անշուշտ լեզվական ավանդույթի խնդիր է:

Այստեղից հասկանալի է Դուրյանի անսովոր հանդգնությունը («Տրտունջք»-ը ոչ միայն ընդվզում է, այլ նաև՝ հանդգնություն): Նա ակնարկում է, որ ինքը հակադրվում է Աստծուն, ներքևում է, սակայն բարձրանալով աստղերի ահալի սանդուղքը, բանաստեղծ դառնալով՝ կարող է լինել վերևում: Սա է վկայում նաև «Անշուշտ ինձ կյանք մը կազմած ես ետքի…» տողից սկսվող պարբերությունը, որտեղ խոսվում է երկրային կյանքից հետո սկսվող բանաստեղծակ անանմահության մասին: «Ըստ էության, Աստված վերցնում է բանաստեղծի կյանքը, նրան «առաջարկելով» կյանքի ավելի բարձր ձև՝ *«Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոթքի»* : Խոսքն այստեղ, հավանաբար, ինչ-որ «ուխտի» մասին է, որը կապվել է երկուսի միջև (ինֆորմացիայի անմատչելի խորքում գտնվող, արտաքին գիտակցության համար անըմբռնելի իմաստային միջուկ, որից դուրս են գալիս իմաստային բարդ գծեր ու ուղղություններ)»[16]:

Անդրադառնալով հաջորդ «Զոջում» բանաստեղծությանը, տեսնում ենք, որ այն և «Տրտունջք»-ը հակադրված են իրար, ինչպես «Սիրել»-ը և «Դրժել»-ը հենց վերնագրերից սկսյալ: «Զոջում»-ը «Տրտունջք»-ի շարունակությունն է,բայց և՝ հակապատկերը.

Երեկ, երբ պաղ քրտանց մեջ
Սև մրափ մը կ՝առնեի,
Եվ թոշնած զույգ մը վարդեր
Այտերուս վրա կ՝այրեին,…
…Եվ մահու թռիչք մ՝ունեի,
Լսեցի մորս հեծեծում…
Բացի աչքերս խոնջած,
Մորըս արտոսրը տեսի՛…
Ո՛հ, ճշմարիտ գորովի

[15] Доровски Л. В., Древнегреческий язык. учебное пособие, из. ФЛИНТА, из. Наука, Москва, 2011, стр. 117.

[16] Էդոյան Հենրիկ, Շարժում դեպի հավասարակշռություն, հոդվածներ, էսսեներ, Սարգիս Խաչենց Փրինթինֆո հրատ.,Երևան, 2009, էջ 407:

Մարգարիտներ սուտ ու կեղծ…:…
…Ա՜հ, գըլուխս փոթորկեց…
Այս սև հեղեղ տըվի դուրս…
Ո՜հ, ներե՜ ինձ, Աստված իմ,
Մորըս արտոսրը տեսի…:[17]…

Եթե «Տրտունջք»-ը գրված է ներկայով, և նկարագրում է հենց ներկա պահի վերապրումը, «Զղջում»-ը բացառապես անցյալ է, հիշողություն (սկսած հենց ամենաառաջին բառից՝ «Երեկ, երբ պաղ քրտանց մեջ»՝ *երեկ*): «Զղջման» տրամադրության հանգստությունը հակադրվում է «Տրտունջք»-ի մոլեգնությանը: Նախորդ բանաստեղծությանը հակադիր բանաստեղծը այստեղ «զղջում» է, երեկ կատարվածը անվանում է՝ «սև մրափ մը», «մահու թռիչք», «սև հեղեղ», վերջում գրում. «…ներե՜ ինձ, Աստված իմ»[18]: Այս բանաստեղծության մեղմությունը գալիս է հավասարակշռելու «Տրտունջք»-ի տրամադրությանը: Այսպիսով՝ չնայած հիշյալ բանաստեղծությունները հակադրված են իրար ու հակապատկերներ են, միասնական ամբողջություն են կազմում, և մեկը լիարժեք չէ առանց մյուսի:

Լ. Ադամյան

Հակադրությունը Պետրոս Դուրյանի «Տրտունջք» և «Զղջում» բանաստեղծություններում

Սույն հոդվածի մեջ հեղինակը, օգտագործելով դեդուկտիվ մեթոդը, ջանում է ցույց տալ հակադրության մոտիվը, որը հանդիսանում է ռոմանտիզմ գրական ուղղության մեջ կարևորագույներից մեկը, Պետրոս Դուրյանի «Տրտունջք» և «Զղջում» բանաստեղծությունների մեջ:

«Տրտունջք» բանաստեղծության մեջ ցույց է տրված, թե ինչպես է Դուրյանը հակադրում Աստծուն և Բանաստեղծին՝ օգտագործելով Արևը, որպես Աստծո խորհրդանիշ, իսկ Աստղը՝ Բանաստեղծի: Այնուհետև, վեր է լուծվում Բանաստեղծի՝ Աստված դառնալու մոտիվը:

«Զղջում» բանաստեղծության մեջ, որը թե՛ կրում է հակադրություն հենց ինքն իր մեջ, թե՛ հակադրվում է նախորդ՝ «Տրտունջք» բանաստեղծությանը, ցույց է տրված արդեն Բանաստեղծի զղջումը և Աստծո գերակայության ընդունումը:

Л. Адамян

Противопоставление в стихотворениях ПетросаДуряна «Ропот» и «Раскаяние»

Резюме

---

[17] Դուրյան Պետրոս, Երկեր, Սովետական գրող հրատ., Երևան, 1981, էջ՝ 54:
[18] Նույն տեղում, էջ 54:

В этой статье автор, используя метод дедукции, старается показать мотив противопоставления- одно из основных черт Романтизма- в стихотворениях «Ропот» и «Раскаяние» Петроса Дуряна.В стихотворении «Ропот» Дурян противопоставляет Бога и Поэта, используя Солнце-как символ Поэта, так же описывает превращение Поэта в своеобразного «Бога». А стихотворение «Раскаяние» является продолжением и полной противоположностью «Ропота»: поэт раскаивается и признает величие Бога.

L. Adamian

Contraposition in the poems «Clamour» and «Repentance» of Petros Durian

Summary

In this article the author, by means of deductive method, is trying to show the motive of contraposition-one of the main features of Romanticism-in the poems «Clamour» and «Repentance» of Petros Durian. In the poem «Clamour» Durian is opposing the God and the Poet using Sun as the symbol of God and Star as Poet's symbol, and also is showing Poet's transition into a peculiar «God». In the poem «Repentance», which is the continueance, but also the opposition of «Clamour», poet describes his regret and acceptance of God's grandeur.